

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.296>

## Manifestations of the Boundary in Everyday Life of a Village School

Nelli Karapetyan

<https://orcid.org/0009-0005-4931-9957>

Institute of Archaeology and Ethnography NAS RA

History Museum of Armenia

[nelkarapetyan96@gmail.com](mailto:nelkarapetyan96@gmail.com)

**Keywords:** border village, border school, everyday life, migration, place of memory.

*In 2020, the Artsakh war and the military-political processes that followed it were accompanied by a number of socio-political, economic, and socio-cultural realities, which led to certain everyday transformations, especially in the settlements that became borderlands. In this report, I sought to observe how this new border situation manifested itself in the daily life of the school operating in the village, using the example of one of the settlements that has become a border after 2020.*

*The academic literature on schooling and education in remote villages typically addresses socio-economic and demographic issues, as well as the importance of the school in ensuring the continuity of the village as a settlement. However, a school is also a socio-cultural phenomenon, encompassing the life space of students and teachers, with its standards of behavior, communication, speech, clothing, physical space characteristics, and the nature of school-community relations. Consequently, the study of the school as a socio-cultural phenomenon is of equal importance. This is particularly relevant in the context of border schools.*

*A socio-cultural study of border schools will enable us to address several fundamental questions. These include whether the reality of the border has been reflected in the school and how it is manifested.*

## Մահմանի դրսևորումները գյուղի դպրոցի առօրեականությունում

Նելլի Կարապետյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայաստանի պատմության թանգարան

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 296-312.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 21.09.2024

Revised: 06.10.2024

Accepted: 20.11.2024

© The Author(s) 2024

**Հիմնաբառեր՝** սահմանամերձ գյուղ, սահմանային դպրոց, առօրեականություն, միգրացիա, հիշողության վայր:

*Հոդվածում քննարկվում է Արցախյան երկրորդ պատերազմի և դրան հաջորդած ռազմական ու քաղաքական զարգացումների ազդեցությունը առօրյա կյանքում՝ կենտրոնանալով սահմանային գյուղի դպրոցի վրա: Շեշտվում է դպրոցական կրթության սոցիալ-մշակութային հարթությունը, ինչը ներառում է վարքագծի չափանիշները, հաղորդակցությունը և դպրոցի ու համայնքի միջև փոխհարաբերությունները: Սահմանային դպրոցի ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու, թե սահմանային իրականությունն ինչպես է ազդում դպրոցական միջավայրի և դրա առօրյա վրա: Հիմնական հարցերը վերաբերում են նրան, թե ինչպես է սահմանային իրավիճակը արտացոլվում դպրոցում, և ինչպես են սահմանային փոփոխությունները ազդում կրթական պրակտիկայի և համայնքում դպրոցի դերի վրա:*

### Проявления границы в сельском школьном повседневности

**Нелли Карапетян**

Институт археологии и этнографии НАН РА

**Ключевые слова:** приграничное село, пограничная школа, повседневность, миграция, место памяти.

*В 2020 году Арцахская война и последовавшие за ней военно-политические процессы сопровождалась рядом социально-политических, экономических и социокультурных реалий, которые привели к определенным трансформациям в повседневной жизни, особенно в населенных пунктах, ставших приграничными. В этой статье я стремился пронаблюдать, как эта новая пограничная ситуация проявилась в повседневной жизни сельской школы, на примере одного из населенных пунктов, ставших приграничными.*

*Научная литература по школьному обучению и образованию обычно затрагивает социально-экономические и демографические вопросы, а также важность школы в обеспечении целостности села. Однако школа – это еще и социокультурный феномен, охватывающий жизненное пространство учащихся и учителей со своими нормами поведения, общения, речи, одежды, характеристиками физического пространства, характером отношений школы с обществом. Следовательно, изучение школы как социокультурного явления имеет не менее важное значение. Это особенно актуально в контексте приграничных школ.*

*Социокультурное исследование приграничных школ позволит нам рассмотреть, как изменение границ повлияло на школьный распорядок, на организацию воспитательной работы, на место и значение школы в новой реальности.*

\* \* \*

**Ներածություն:** 2020 թ. Արցախյան պատերազմը և դրան հաջորդող ռազմաքաղաքական գործընթացները ուղեկցվեցին նաև մի շարք սոցիալ-քաղաքական, տնտեսական, և սոցիալ-

մշակութային իրողություններով, որոնք հանգեցրին որոշակի առօրեական փոխակերպումների հատկապես սահմանային դարձած բնակավայրերում: 2021-2022 թթ. իրականացվող հետազոտության ժամանակ սահմանային դարձած գյուղերից մեկում ուսուցչուհու հետևյալ արտահայտությունը դարձավ այս հոդվածի թեմային առանձին անդրադառնալու շարժառիթը. «*Ո՛րն է սահմանայինը, ո՞րը սահմանամերձը: Սահմանամերձը ունի պաշտոնական չափելիություն, այսինքն սահմանագծից կոնկրետ հեռավորությամբ է որոշվում տվյալ բնակավայրի սահմանամերձ համարվելը: Սահմանայինի վերաբերյալ ես չեմ գտել որևէ պաշտոնական սահմանում: Բայց արդյոք միայն պաշտոնական չափանիշներով կարող ենք բնորոշել սահմանը, թե՞ կան նաև մշակութային ու սոցիալական իրողություններ, որոնք և ձևավորում են «սահմանային» տարածքը: Այլ կերպ ասած սահմանների ձևավորումը, փոփոխությունը ոչ միայն «վերևից-ներքև» գործընթաց է, այլ նաև «ներքևից վերև», որը բխում է սահմանային շրջաններում ապրող մարդկանց առօրյա պրակտիկաներից [Newman 2003]: Ահա այս հոդվածի շրջանակներում փորձելու եմ ուրվագծել այն սոցիալ-մշակութային իրողությունները, որոնք դրսևորվում են սահմանային դպրոցի առօրյայում՝ մեկ գյուղի օրինակով:*

Սահմանը, որի էությունը ի սկզբանե յուրայինի և օտարի առանձնացումն է, կարող է լինել ֆիզիկական (տարածական), ժամանակային, գաղափարական, մշակութային և այլն [Oomen 1995, Szytniewski, Spierings 2014]: Ընդ որում՝ սահմանների հետ կապված ամենակարևոր հարցն այն է, թե որքանով են դրանք գործում որպես խոչընդոտներ շարժման և փոխազդեցության համար, կամ որպես շփման գծեր, որտեղ ստեղծվում են հանդիպման և շփման կետեր [Newman 2003, Konrad 2014]: Պետական սահմանները, կապված կառավարման ընթացակարգերից, կարող են դառնալ ավելի թափանցելի և փափուկ (ինչը ենթադրում է նաև ոչ պաշտոնական մակարդակի համագործակցության և շփման աճ սահմանագծի յուրաքանչյուր կողմի բնակիչների միջև) կամ հակառակը՝ ավելի փակ և խիստ վերահսկելի: Որքան ուժեղ է սահմանի «արգելապատնեշի» գործառույթը, այնքան ավելի երևակայված, ավելի վերացական է այն կողմում ընկածի, օտարի նարատիվը [Newman 2003], ինչը փակ և լարված սահմանների պարագայում տեղափոխվում է տազնապի, լարվածության, անորոշության դաշտ [Goodhand 2008]: Ինչ վերաբերում է հակամարտություններին, ապա դրանք հաճախ միայն տարածքների ու ռեսուրսների շուրջ չեն, այլ ունեն ավելի խոր արմատներ՝ կապված ինքնության և այն մշակութային կապերի հետ, որ ունեն մարդիկ իրենց նախնիների կամ պատմական տարածքների հետ [Dzurek 1999; Newman 2004; Kolossov, Scott 2013]: Արդյունքում, վիճելի սահմանամերձ շրջանները հաճախ դառնում են «հիշողության լանդշաֆտներ»՝ առատ հուշարձաններով, թանգարաններով և պատմական վայրերով. դրանք դառնում են ազգային կամ էթնիկ հիշողության սրբազան տարածքներ [Kolossov, Scott 2013]:

Հեռավոր գյուղերում դպրոցի և կրթության ուսումնասիրությունները սովորաբար անդրադառնում են սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական հարցերին և այն նշանակությանը, որ ունի դպրոցը գյուղի՝ բնակավայրի շարունակականությունը ապահովելու հարցում [Lyson 2002; Kovács 2012; Pechkin 1978]: Հայաստանյան հետազոտական դաշտում Թրփանձյան հասարակական հետազոտությունների կենտրոնը անդրադարձել է գյուղական դպրոցներին

Դպրոցական Կրթության Հասանելիությունը Հայաստանում հետազոտության շրջանակներում, որտեղ դիտարկվել են դպրոցների շենքային և ընդհանուր պայմանները, անձնակազմի ընդհանուր հասանելիությունը և որակը: Հեռավոր գյուղերում հիմնական խնդիրներից են դպրոցների շենքային և նյութատեխնիկական ապահովության և կադրային ռեսուրսների հարցերը, աշակերտների բացակայությունները տարբեր սոցիալ-տնտեսական խնդիրներով պայմանավորված: Մինչդեռ դպրոցը նաև սոցիալ-մշակութային երևույթ է, որպես դպրոցականների և ուսուցիչների կյանքի տարածք՝ վարքի, հաղորդակցության, խոսքի, հագուստի իր չափանիշներով, իր ֆիզիկական տարածության հատկանիշներով և դպրոց-համայնք առնչությունների բնույթով: Հետևաբար, պակաս կարևոր չէ նաև դպրոցի՝ որպես սոցիալ-մշակութային երևույթի ուսումնասիրությունը, ինչը նաև որոշակի առանձնահատկություններ է ստանում, երբ խոսում ենք սահմանամերձ դպրոցի մասին: Սահմանների ուսումնասիրության (border studies) մեջ առանձին ուղղություն է համայնքային առօրյայի վերլուծությունը, որը զարգանում է սահմանների շուրջ կամ խաթարվում է սահմանների անվտանգության պատճառով [Kolossova and Scott 2013]: Առօրյան կարելի է հասկանալ որպես սոցիալական վերափոխման ավելի մեծ գործընթացների արտացոլում, բայց որը, կարելի է ասել, ավելի շատ է առնչվում «տեղում» սոցիալական իրողություններին:

Սահմանամերձ դարձած դպրոցի սոցիոմշակութային ուսումնասիրությունը առօրեականության միջոցով հնարավորություն կտա պատասխանել մի քանի հիմնական հարցադրումների.

- Արդյո՞ք ռեֆլեքսվել է իրականությունը որպես այդպիսին (սահմանային) և ինչպես է այն դրսևորվում:
- Ինչպե՞ս է սահմանի փոփոխությունը ազդել դպրոցական առօրյայի, կրթական գործի կազմակերպման վրա:
- Ո՞րն է դպրոցի տեղն ու նշանակությունը նոր իրականությունում:

**Գյուղի և դպրոցի ընդհանուր նկարագիր:**

Հետազոտության դաշտը Գեղարքունիքի մարզի սահմանային գյուղերից մեկն է: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2230 մ բարձրության վրա (նկ. 1): Ստորև ներկայացված աղյուսակում կարելի է տեսնել գյուղի բնակչությանը վերաբերող վիճակագրական տվյալները՝

Բնակչությունը ըստ տարիների	
1831թ.	98
1908 թ.	917
1970 թ.	629
1979 թ.	534
1989 թ.	549
2001 թ.	344
2004 թ.	378
2023 թ.	370

Գյուղը հիմնադրվել է 1829-30 թթ.: Նախնիների մի մասը գաղթել է Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ [Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան 2008]: Խորհրդային շրջանում (1950-ականներին) այստեղ բնակություն են հաստատում նաև ադրբեջանցիներ: Գյուղը համարվում էր «ինտերնացիոնալ» մինչև 1988 թ., երբ ադրբեջանցիները հեռանում են: Եվ արդեն 2020 թ. ռազմաքաղաքական իրադարձություններից հետո գյուղը հայտնվել է սահմանային իրավիճակում: Պաշտոնապես սահմանամերձ չի համարվում, բայց սահմանից հեռու է մի քանի հարյուր մետր և փաստացի սահմանային իրավիճակում է (նկ. 2): Այսօր գյուղն ունի շուրջ 370 բնակիչ՝ ըստ պաշտոնական տվյալների:

Գյուղը դպրոց ունեցել է դեռ 1940-ականներից, բայց ներկայիս տիպային դպրոցի շենքը կառուցվել է 1984-86 թթ. և գործում է մինչ օրս (նկ. 3): Հիմնադրվել է որպես տարրական, այնուհետև դարձել 7-ամյա, ապա 8-ամյա և միայն 1990 թ. դարձել միջնակարգ դպրոց: Ըստ բնակիչների՝ խորհրդային վերջին տարիներին դպրոցում սովորողների թիվը հասնում էր 160-ի: Մինչդեռ այսօր դպրոցում սովորողների թիվը չի գերազանցում 40-ը:

Ընդ որում խորհրդային շրջանում լինելով «ինտերնացիոնալ գյուղի» դպրոց՝ այն միաժամանակ ծառայում էր նաև այստեղ բնակվող ադրբեջանցիներին. *«Հա, նույն դպրոցն էր, իրենք իրենց դասարաններն ունեին, մենք մեր դասարանները ունեինք առանձին: Տնօրենը հայ էր: Իրենք էլ իրենց ուսուցիչներն ունեին, մենք մեր ուսուցիչները»*, *«բայց իրենք 3, 4, 5, 6 -րդ դասարաններում հայկական այբուբեն էին սովորում: Մենակ այբուբեն, էնքան որ գրել կարդալ իմանան ուրիշ բան չէ:»* [Կարապետյան Ն., ԴԱՆ]: Այստեղ թերևս կարող ենք խոսել դեռևս խորհրդային շրջանում ազգային, մշակութային, լեզվական սահմանների առկայության մասին: Հատկանշական է, որ այդ սահմանը ամենացայտուն կերպով գծվում էր հենց դպրոցում, որը մեծ նշանակություն ունի ինքնությունների ձևավորման հարցում [տես՝ Mkrtchyan 2013]:

**Տեսական և մեթոդաբանական մոտեցումներ:** Գյուղական համայնքների դպրոցները բազմաթիվ դերեր են կատարում: Բացի հիմնական կրթությունը ապահովելուց, նրանք ծառայում են որպես սոցիալական և մշակութային կենտրոններ: Դրանք սպորտի, թատրոնի, երաժշտության և այլ քաղաքացիական գործունեության վայրեր են: Ալան Պեշկինը, (1978) խոսելով գյուղական համայնքների գոյատևման հարցում դպրոցի կարևորության մասին, նշում է, որ դպրոցները ծառայում են որպես համայնքային ինքնավարության, համայնքի կենսունակության խորհրդանիշ: Մեծ է նրանց դերը համայնքային ինտեգրման հարցում. *«Առանց այն էլ միայն դպրոցն է մնացել գյուղում, ուրիշ ի՞նչ ունենք, որ մարդկանց միավորի: Էդ էլ որ փակեցին ի՞նչ է լինելու»* [ԴԱՆ, 2021-2023]:

Բնականաբար այս դպրոցը ևս մեկն է այն գյուղական դպրոցներից, որոնք իրականացնում են բազմազան գործառնություններ և ունեն բազմաշերտ նշանակություն: Այստեղ ես կանդաղադատնամ այն հարցին, թե ռազմաքաղաքական գործընթացների արդյունքում ինչպես է փոխվել դպրոցի առօրեականությունը՝ հանգեցնելով նոր փորձառությունների ու առօրեականության կառուցակցման:

Դպրոցական առօրյան դիտարկել եմ 3 հիմնական հարթություններում՝ դպրոցի ֆիզիկական տարածության ընկալում, դպրոցական ժամանակի ընկալում, հաղորդակցության բովանդակություն և ոճ:

Իրականացվել են խորացված հարցազրույցներ գյուղի համայնքապետի, դպրոցի տնօրենի և ուսուցիչների հետ: Գյուղ կատարած մի քանի այցելությունների ընթացքում դիտարկվել է նաև դպրոցի ֆիզիկական տարածքը: Կատարվել է նաև համեմատական վերլուծություն այլ գյուղերից ունեցած նյութի հետ:

**Սոցիալ-ժամանակային ընկալում:** Լայն կտրվածքով այստեղ պետք է խոսենք նախ մարդկանց ընկալումներում պատերազմով և սահմանային փոփոխություններով պայմանավորված ժամանակի բաժանման մասին: Հասարակական, մշակութային, սոցիալական տարբեր հարցեր քննարկելիս բանասացների խոսքում կարելի է հանդիպել այդ բաժանմանը՝ մինչև պատերազմ և պատերազմից հետո: Երկու ժամանակների ամենաբնորոշ տարբերությունը հետպատերազմական անորոշությունն է.

*«Եսիմ, հլը էս երկրի վիճակ մի հաստ որոշեն ինչ են անում, ինչ չեն անում, ժողովուրդն էլ հանգստանա, ժողովուրդն էլ չգիտի տուն սարքի, չսարքի, չգիտի որտեղ էթա: Շատ գիտեմ: Էտ ձև էս գյուղի բոլոր ջահելներ մնացած առանց ամուսնանալ, այ բայա ջան: Էտ էլա հարց էլի, աճին էտ էլա ազդում»* [ԴԱՆ, 2021-2023]:

Թեպետ մինչև սահմանային կարգավիճակում հայտնվելն էլ միգրացիան գյուղից սովորական բնույթ էր կրում, սակայն հետպատերազմական/սահմանային ժամանակին բնորոշ անորոշությունն ու լարվածությունը մեծացրել են դրա արագությունը և ծավալները: Ըստ համայնքապետի՝ գյուղն ունի 370 բնակիչ, բայց շուրջ 120-ը պատերազմից հետո տեղափոխվել են այլ բնակավայրեր, թեպետ մի մասը սեզոնային վերադառնում մշակում են իրենց հողը: Սա նաև որոշակիորեն հանգեցրել է դպրոցում սովորող աշակերտների թվի նվազման:

Ինչ վերաբերում է դպրոցական ժամանակին, ապա աշակերտների պարագայում դպրոցական ժամանակի ավարտը դառնում է գյուղը լքելու սկիզբը/հնարավորություն: Դպրոցը մի ինստիտուտ է, որ ճանապարհ է բացում դեպի դուրս՝ քաղաք կամ այլ երկիր, բնակավայր, ինչը հիմնականում տեղի է ունենում երկու ճանապարհով՝ կրթական միգրացիայի և աշխատանքային միգրացիայի: Նրանք, ովքեր ընտրում են կրթությունը շարունակելու ճանապարհը, հիմնականում գնում են Երևան՝ հետ չվերադառնալու ակնկալիքով: Թերևս սրանից ելնելով են որոշ սահմանային գյուղերում դեմ դպրոցների միավորմանը, ինչը, ըստ բնակիչների, կավելացնի գյուղից արտագաղթի տեմպերը. *«Եթե դպրոցը փակվեց, գյուղն արդեն իսկ վտանգվում է, գյուղում էլ ոչ մի ծնող չի մնա»* [ԴԱՆ, 2021-2023]: Որոշ մասը, հիմնականում տղաներ, գնում են արտագնա աշխատանքի, որը նույնպես ենթադրում է ապագան գյուղից հեռու կառուցելու հնարավորություն: Կարելի է նկատել դպրոցի երկակի դերը. մի կողմից այն նպաստում է համայնքի կենսունակությանը՝ նպաստելով, որ դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքները չհեռանան գյուղից, մյուս կողմից ճանապարհ է հարթում դպրոցն ավարտող երիտասարդների համար, որ հեռանան գյուղից: Ստացվում է, որ դպրոցի նշանակությունը որպես գյուղի կենսունակությունը ապահովող միջոց այնքան էլ միանշանակ չէ և անգամ գոյության դեպքում այն նպաստում է միգրացիային: Ավելին, կարող ենք առանձնացնել ապագայի երկու ընկալումներ.

առաջինը՝ առանձին երիտասարդների ապագան է, որը իրենք չեն տեսնում գյուղում, երկրորդը՝ գյուղի ապագան է, որը վտանգվում է իր հիմնական ինստիտուտներից մեկի՝ դպրոցի բացակայության դեպքում:

Ուսուցիչների պարագայում կարելի է խոսել ուսուցչի երկակի կերպարի մասին: Դպրոցում աշակերտներին լուսավորող, գիտելիքներ տվող, ոգևորող և սովորելով բարեկեցիկ ապագա կառուցել հորդորող *մտավորական-հոգեբան-ուսուցիչը* (մակդիրները՝ ըստ բանասացների), դպրոցից դուրս նույն անվտանգ կենսընթացի մտահոգություններով և ապագայի հանդեպ անորոշությամբ համակված գյուղացին է: *«Բոլոր 30 ուսուցիչները, ներառյալ ես, դարձել ենք հոգեթերապևտ»<sup>1</sup>, «ես էտքան երեխեքին ասում եմ, որ հնարավորություն ունեն, բայց չէ, իրանց ծնողները չեն ձգտում: կարողա երեխեքը երազեն էտ պահին, իմ խոսքերի վրա ոգևորեն բայց ոչ մի արդյունք»* [ԴԱՆ, 2021-2023]:

Ավելի երկարաժամկետ հեռանկարում դպրոցական ժամանակը ուսուցչի համար ներդրում է բարեկեցիկ ապագայի համար. *«վաղ մյուս օր ստաժա լինելու, գնալու ես թոշակի, գոնե թոշակդ բարձր կլինի: Տենանք էտքան կապրենք թե չէ»* [ԴԱՆ, 2021-2023]:

Սոցիոժամանակային չափման մեջ կարևոր է նաև դպրոցական ժամանակի սիմվոլիզացիան: Բայց մինչ սրան անդրադառնալը խոսենք սոցիոֆիզիկական տարածության ընկալման մասին, քանի որ ինչպես ցույց է տալիս Հենրի Լեֆևրը հասարակական-մշակութային ժամանակը և տարածությունը փոխկապակցված են և գործում են փոխազդեցության ու համարժեքության սկզբունքով [Lefebvre 1991]:

**Սոցիալ-ֆիզիկական տարածության ընկալում:** Ֆիզիկական առումով նախ տեղի է ունենում «հասանելիության սահմաններում գտնվող աշխարհի» փոփոխություն: Առօրեականության տեսաբան Ալֆրեդ Շյուցը «հասանելիության սահմաններում գտնվող աշխարհ է անվանում անհատի կողմից որպես իր իրականության միջուկ վերապրվող աշխատանքի աշխարհի շերտը: Այն ներառում է մարդու տեսողության և լսողության դաշտում ընկած իրերը, իրական աշխատանքի համար բաց աշխարհի ոլորտը և պոտենցիալ աշխատանքի շրջակա ոլորտները: Հասկանալի է, որ «իմ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհի» ողջ համակարգը փոփոխության է ենթարկվում իմ ցանկացած տեղաշարժի արդյունքում. ես, մարմինս տեղաշարժելով, տեղաշարժում եմ կոորդինատային համակարգիս Օ կենտրոնը, և միայն դա բավարար է, որ այդ համակարգին վերաբերող կոորդինատային բոլոր թվերը փոփոխվեն [Schutz 1945]: Տվյալ պարագայում տեղի է ունեցել «հասանելիության սահմաններում գտնվող աշխարհի» սահմանափակում: Այս առումով հետքքրքական է Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի դպրոցի օրինակը, որտեղ պատով փակել են դպրոցի այն պատուհանները, որ հակառակորդի դիրքերի կողմ են նայում, իսկ բակում նույն ուղղությամբ պատ են կառուցել (նկ. 4): Չինարի գյուղում դարձյալ փակել են հակառակորդի դիրքեր նայող պատուհանները (նկ. 5)<sup>2</sup>: Մեր կողմից

<sup>1</sup> Schools Struggle in Armenia's Border Villages, Fighting between Armenia and Azerbaijan has affected thousands of children's right to learn. Mkrtchyan Gayane, <https://iwpr.net/global-voices/schools-struggle-armenias-border-villages> 16.05.2024.

<sup>2</sup> Չինարիի և Բարեկամավանի դպրոցներից նկարները տրամադրելու համար շնորհակալ եմ Նժդեհ Երանյանին:

դիտարկված դպրոցի շենքի պարագայում, չենք կարող ասել պատահականությամբ, թե հենց նույն դիտավորությամբ, բայց այստեղ ևս դպրոցի սահմանահայաց պատը չունի թափանցիկ պատուհաններ: Մեկ այլ պարագայում ֆիզկուլտուրայի դասաժամերին չեն օգտագործում դրսի մարզահրապարակը՝ ֆուտբոլի դաշտը: Այրքի դպրոցում 2020 թ.-ի իրադարձություններից հետո հապճեպ վերանորոգել էին շենքի ջարդված պատուհաններն ու ճաքճքած պատերը: Հատկանշական է, որ եթե վերջին երկու պարագայում մեծ է ֆիզիկական վտանգի գործոնը՝ հակառակորդի նշանառության տակ չհայտնվելու առումով, ապա առաջինների դեպքում առկա է նաև հոգեբանական ասպեկտը՝ *«որ պատուհանից անընդհատ չտեսնեն հակառակորդի դիրքերը»:*

Պետք է նկատել, որ գյուղի դպրոցի շենքը, գտնվելով կենտրոնական հատվածում, ֆիզիկական առումով գյուղի միակ պետական, վարչական կառույցն է: Քանի որ դեռ 2006 թ.-ից դպրոցի ներսում մի սենյակ հատկացված է նաև համայնքապետարանին: Իսկ մեկ այլ սենյակ ծառայում է որպես բուժկետ՝ համայնքի համար: Ընտրությունների ժամանակ՝ որպես ընտրատեղամաս: Եթե սրան էլ ավելացնենք, որ դպրոցի հարակից տարածքում է նաև «գյուղամեջ» կոչված տարածքը, ապա կարող ենք ասել, որ սա հանդիսանում է գյուղի վարչա-տնտեսական, առողջապահական և կրթա-մշակութային կենտրոնը:

2015 թ.-ին գյուղի համայնքապետի նախաձեռնությամբ դպրոցի բակում կանգնեցվում է հուշարձան՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին: Ամեն տարի մայիսի 9-ին այս հուշարձանի մոտ ծաղիկներ են դրվում և իրականացվում միջոցառումներ՝ ի հիշատակ զոհվածների (նկ. 6):

2020 թ. պատերազմից հետո դպրոցի միջանցքում բացվում է անկյուն՝ նվիրված պատերազմում զոհված իրենց շրջանավարտի հիշատակին: Իսկ 2022 թ. սեպտեմբերյան ագրեսիայից հետո 2 դասասենյակ անվանակոչվում են ագրեսիայի հետևանքով զոհված համագյուղացի սպայի և 2020 թ. զոհված շրջանավարտի անունով (նկ. 7, 8, 9, 10): Ավելին, ըստ համայնքապետի մյուս տարվա համար նախատեսված է նաև զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրում դպրոցի բակում: Վերջինս նախատեսված է իրականացնել Վարդենիս համայնքի բոլոր բնակավայրերում: Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի դպրոցը անվանակոչված է 1994 թ. գյուղի պաշտպանական դիրքերում զոհված համագյուղացու անունով, իսկ բակում տեղադրված է նրա կիսանդրին:

Այսպիսով, սոցիալական ժամանակի փոփոխությամբ պայմանավորված դպրոցի սոցիո-ֆիզիկական տարածության իմաստավորումն ու սիմվոլիզացիան ստանում են նոր շերտեր, այն է՝ անվտանգային և հուշային տարածք:

**Հաղորդակցության բովանդակություն և ոճ:** Դպրոցական առօրեականության հաջորդ հարթությունը, որին անդրադառնում են, ներդպրոցական կյանքում հաղորդակցության բովանդակությունն ու առանձնահատկություններն են:

- Այստեղ առաջին հերթին դիտարկել են միջոցառումները և մասնավորապես Վերջին զանգը: Ընդհանուր առմամբ պատերազմից հետո տեղի է ունեցել Վերջին զանգի միջոցառումների կամ առնվազն դրանց երաժշտական մասի կրճատում: Իսկ եղած միջոցառումների ելույթների մեջ պարտադիր բաղադրիչ է բանակին, զինվորին նվիրված խոսքը:

• Երկրորդը՝ ռազմագիտության դասերի կարևորության շեշտումը, տարհանումների, արտակարգ իրավիճակներին վերաբերող տեղեկատվական հանդիպումների ինտենսիվությունը. «*Հա դե միշտ էլ իրազեկման գործում եղել ենք, միշտ էլ իրազեկվել ենք ամեն հարցում: Հանձինս մեր ռազմագիտության ուսուցչի՝ զինդեկի: Երեխաներին միշտ կազմակերպում է տարհանումներ և այլն, և այլն, որ ավելի տեղեկացված լինեն*» [ԴԱՆ, 2021-2023]: «*Արտակարգ իրավիճակի հետ մենք առնչվում ենք ամեն օր, քանի որ սահմանամերձ ենք, իսկ վարժանքները մեզ օգնում են, ուղղություն են տալիս: Սկզբում դրանք ընկալվում էին իբրև պարտականության պես մի բան, բայց հետո բոլորս սկսեցինք գիտակցել այս հարցի կարևորությունը<sup>1</sup>:*

• Հաջորդը տղաների հանդեպ ուշադրության մեծացումն է: «*Բնականաբար կա, որովհետև հայրենիքը տղան է պաշտպանում, մենք մեր բաժինն ունենք պաշտպանելու, բայց հիմնական զինվորը տղան է, այո: Օրինակ մեր զինդեկը, ես զգում եմ, մանավանդ շարային պատրաստականությունները, զենքի կիրառությունը, շատ լավ, ավելին է անում (տղաների համար): Մեր տղաներն էլ, ոչինչ, սովորում են*» [ԴԱՆ, 2021-2023]:

**Ամփոփում:** Ընդհանուր առմամբ մեր հետազոտության դաշտի շրջանակներում կարող ենք առանձնացնել սահմանի մասին ընկալումների երկու մակարդակ. առաջինը՝ խորհրդային շրջանում ձևավորված ազգային, մշակութային սահմանը, որ հիմնականում դրևորվում էր դպրոցում, երկրորդը՝ 2020-2021 թթ. հետո ձևավորված պետական սահմանի ընկալումն է, որն իր արտացոլումն է գտնում դպրոցական առօրյայում:

Ամփոփելով՝ պետք է ասել, որ սահմանային իրավիճակում հայտնվելը որոշակիորեն հանգեցրել է նոր իրականության և գյուղի դպրոցի առօրեականության փոփոխությունների: Իսկ իրականությունն այն է, որ այս սահմանային գյուղերում կյանքը թելադրված է հակամարտությունների հետ կապված ռիսկերով և հետևանքներով, ինչի արդյունքում այնպիսի հիմնարար իրավունքը և կարիքը, ինչպիսին կրթությունն է, մղվում է հետին պլան:

Սոցիալ-տարածական առումով նախ կրճատվում է ֆիզիկական տեղաշարժի հնարավորությունը: Սոցիալական ժամանակի փոփոխությամբ պայմանավորված դպրոցի սոցիո-ֆիզիկական տարածության իմաստավորումն ու սիմվոլիզացիան ստանում են նոր շերտեր, այն է՝ անվտանգային և հուշային տարածք: Որպես հուշային տարածք, «հիշողության վայր» դպրոցի տարածքում «ամրագրվում են» սահմանային լարվածությամբ պայմանավորված իրադարձությունները:

<sup>1</sup> Աղետներին պատրաստ դպրոց՝ սահմանամերձ գյուղում, <https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%D5%A1%D5%B2%D5%A5%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%B1-%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%B8%D6%82%D5%B4>

Բացի այն, որ հետպատերազմական միգրացիայի արդյունքում նվազել է աշակերտների թիվը, սոցիոժամանակային կտրվածքում դպրոցական ժամանակի ավարտը դարձել է գյուղից հեռանալու սկիզբը՝ որպես իրենց ապագան գյուղում չտեսնելու արդյունք: Ավելին, եթե ոչ սահմանային գյուղերի պարագայում դրա պատճառը գյուղի սահմանափակ հնարավորություններն են ուսման, աշխատանքի, մասնագիտական առաջընթացի և ժամանցի առումով, ապա սահմանայինի պարագայում դրան ավելանում է նաև իրենց բնակության տարածքների հանդեպ հակառակորդի հավակնությունները և հրադադարի պարբերաբար խախտման վտանգը: Այսինքն, այստեղ նաև գյուղի ապագայի անորոշության հարցն է, որի վրա ազդող գործոն է դիտվում նաև առաջիկայում՝ նախատեսվող դպրոցների միավորումը:

Ինչ վերաբերում է հաղորդակցությանը, ապա հաղորդակցության բովանդակությունում կարևոր բաղադրիչ է դառնում բանակի և զինվորի թեմատիկան: Դասապրոցեսում հատուկ կարևորություն է տրվում ռազմագիտության դասերին, հատկապես տղաների պատրաստվածությանը այս դասաժամին: Սա նաև թույլ է տալիս ասել, որ եթե մինչև 2020 թ. այդ բովանդակությունը իներցիայով էր փոխանցվում և ավելի շատ առօրեականության ծիսական բաղադրիչ էր, ապա հիմա այդ բովանդակությունը դառնում է իրական/ապրված նաև արտաբերող սերնդի կողմից և ստանում ավելի ռացիոնալ-կիրառական նշանակություն:

Անդրադառնալով մեր գլխավոր հիմնահարցին՝ պետք է նշենք, որ փաստորեն դպրոցի և ընդհանրապես գյուղի կարգավիճակը որպես սահմանային ռեֆլեքսվել է տեղում ապրողների կողմից, մինչդեռ պաշտոնական մակարդակում՝ ոչ. գյուղը և դպրոցը, դպրոցում աշխատող ուսուցիչներն ու սովորող աշակերտները չեն օգտվում սահմանամերձ դպրոցների վերաբերյալ պետության կողմից իրականացվող միջոցառումներից: Սա իր հերթին հանգեցրել է դժգոհությունների և մտահոգությունների գյուղացիների շրջանում, ովքեր այդ հարցը բարձրացնում են տարբեր հարթակներում, բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներում, բայց առայժմ ապարդյուն: Փաստորեն առօրեականության մակարդակում գյուղի դպրոցը համապատասխանում է սահմանամերձ լինելուն՝ նույն պրակտիկաներ, հոգսեր, գործելաճ, բայց պաշտոնական մակարդակում չի սահմանվում որպես այդպիսին:

### Գրականության ցանկ

Դպրոցական Կրթության Հասանելիությունը Հայաստանում, Թրփանձեան Հասարակական Հետազոտությունների Կենտրոն, Երևան, 2012:

**Dzurek D. 1999**, “What makes some boundary disputes important?” *Boundary and Security Bulletin*, N 7 (4), pp. 83-89.

**Newman D. 2004**, “From the international to the local in the study and representation of boundaries: some theoretical and methodological comments.” In *Holding the Lines: Borders in a Global World*, Heather Nicol and Ian Townsend-Gault., eds. Vancouver: University of British Columbia Press.

<sup>1</sup>Նախատեսված է իրականացնել մինչև 2026 թ., որի արդյունքում դիտարկվող գյուղի դպրոցը միավորվելու է հարևան գյուղի դպրոցին:

**Goodhand J. 2008**, War, Peace and the Places in Between: Why Borderlands are Central, in Whose Peace? Critical Perspectives on the Political Economy of Peacebuilding, 2008, pp. 225-244.

**Kolossov V. and Scott J. 2013**, Selected conceptual issues in border studies, Belgeo [Online], 1|2013. <http://journals.openedition.org/belgeo/10532>; DOI: <https://doi.org/10.4000/belgeo.10532v> .

**Konrad V. 2014**, Borders and Culture: Zones of Transition, Interaction and Identity in the Canada-United States Borderlands, Eurasia Border Review, N 5(1), 2014, pp. 41-57.

**Lefebvre H. 1991**, The Production of Space, Oxford: Blackwell, 1991. [https://monoskop.org/images/7/75/Lefebvre\\_Henri\\_The\\_Production\\_of\\_Space.pdf](https://monoskop.org/images/7/75/Lefebvre_Henri_The_Production_of_Space.pdf)

**Mkrtchyan S. 2013**, Formation of National Identity through Primary Education (Yerevan and Tbilisi Schools), PhD dissertation, Ivane Javakhishvili Tbilisi State University Faculty of Humanities, Institute of Ethnology Tbilisi, 2013.

**Newman D. 2003**, On Borders and Power: A Theoretical Framework, Journal of Borderlands Studies, Volume 18, No 1, 2003, pp. 13-25.

**Oomen T. 1995**, Contested boundaries and emerging pluralism, International Sociology, N 10, pp. 251-268.

**Pechkin A. 1978**, Growing up American: Schooling and the survival of community. Chicago: The University of Chicago Press.

**Schutz A. 1945**, On Multiple Realities, Philosophy and Phenomenological Research, vol. V, № 4, pp. 533-576.

**Szytniewski B., Spierings B. 2014**, Encounters with Otherness: Implications of (Un)familiarity for Daily Life in Borderlands, Journal of Borderlands Studies, N 29:3, pp. 339-351, DOI: 10.1080/08865655.2014.938971.

**Lyson T. 2002**, What does a School mean to community? Assessing the social and economic benefits of schools to rural villages in New York, Journal of Research in Rural Education, Winter 2002, Vol. 17, No.3, pp. 131-137.

**Kovács K. 2012**, Rescuing a small village school in the context of rural change in Hungary, Journal of Rural Studies 28 (2012), pp. 108-117.

**Pechkin A. 1978**, Growing up American: Schooling and the survival of community. Chicago: The University of Chicago Press.

Էլեկտրոնային աղբյուրներ

Աղետներին պատրաստ դպրոց՝ սահմանամերձ գյուղում,  
<https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%D5%A1%D5%B2%D5%A5%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%B>

[1-%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%B8%D6%82%D5%B4](#)


23.07.2018:

Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, [https://web.archive.org/web/20200209151002/https://www.cadastre.am/storage/files/pages/pg\\_8945925618\\_pg\\_907871769\\_HH\\_bnak\\_bar..pdf](https://web.archive.org/web/20200209151002/https://www.cadastre.am/storage/files/pages/pg_8945925618_pg_907871769_HH_bnak_bar..pdf).

Schools Struggle in Armenia’s Border Villages, Fighting between Armenia and Azerbaijan has affected thousands of children’s right to learn, Mkrtchyan Gayane, <https://iwpr.net/global-voices/schools-struggle-armenias-border-villages> 16.05.2024.



Նկ. 1. Գյուղի համայնապատկերը:



Նկ. 2. Գյուղի սահմանից հեռավորության փոփոխությունը:



Նկ. 3. Գյուղի դպրոցի շենքը:



Նկ. 4. Բարեկամավան գյուղի դպրոցի սահմանահայաց պատուհանները



Նկ. 5. Չինարի գյուղի դպրոցի սահմանահայաց պատուհանները

Manifestations of the Boundary in Everyday Life of a Village School  
Մահմանի դրսևորումները գյուղի դպրոցի առօրեականությունում



Նկ. 6. Հուշարձան դպրոցի բակում՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմում զոհված համազյուղացիների հիշատակին:



Նկ. 7. Հուշանկյուն՝ նվիրված 2022 թ. զոհված համազյուղացու հիշատակին:



Նկ. 8. 2022 թ. գոհված սպայի անունով անվանակոչված դասասենյակի ցուցանակը:



Նկ. 9. Հուշանկյուն նվիրված 2020թ. գոհված դպրոցի շրջանավարտի հիշատակին:



Նկ. 10. 2020թ. գոհված դպրոցի շրջանավարտի անունով անվանակոչված դասասենյակի ցուցանակը: